Արձանագրություն N 2

«ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-65» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«03» օգոստոսի 2021 թ. ժամը 12:00-ին

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի.

Նախագահ՝ Ա. Խառատյան

Անդամներ՝ Կ. Փալյան, Մ. Երիցյան

Քարտուղար՝ Ա. Վիրաբյան

Բացակայում է. Մ. Երիցյան

Օրակարգ.

**«ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-65» ծածկագրով գնման ընթացակարգի բացման նիստի անցկացում և արդյունքների հաստատում**

**Ընդունել ի գիտություն, որ՝**

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել և հիմնավորումներ չեն ներկայացվել:

1. **«ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-65» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի ներկայացման վերաբերյալ.**
   քարտուղարի կողմից 12:00-ին հայտերի գրանցամատյանը փակելուց հետո, նախագահը հրապարակել է նախահաշվային գները:
2. **Գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.**

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Գտնվելու վայրը |
|---|---|---|
| 1. | «Նալիալ» ՍՊԸ | Տավուշի մ., ք. Իջևան, Արցախյան, 76/1, հեռ. 093-41-53-30, e-mail: mardanyan57@mail.ru |

3. **Տվյալներ ծրարը կազմելու, ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին և բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**
   Փակ կնքված ծրարով «Նալիալ» ՍՊԸ-ն ներկայացրել է.

- դիմում-հայտարարություն գնանշման հարցման մասնակցելու,
- գնային առաջարկ,
- ծավալաթերթ-նախահաշիվ,
- լիցենզիաների պատճեններ. քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման, շինարարության իրականացում՝ բնակելի հասարակական և արտադրական::

Վերոնշյալ կազմակերպության ներկայացված փաստաթղթերը կազմվել են բնօրինակից և 2 օրինակ պատճեններից, փաստաթղթերի բոլոր էջերը կնքված և ստորագրված են մասնակցի կողմից: Մասնակից ընկերության կողմից ներկայացված ծրարը կազմված է «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-65» ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, **սակայն առկա չէ հավելված թիվ 1.1-ը**:

4. **Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի սահմանված պահանջներին համապատասխան կազմած լինելու մասին.**
   Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-65» ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Որոշում.

1. Համաձայն 04.05.2017 թ. ՀՀ Կառավարության N 526-Ն որոշման 41-րդ կետի, կասեցնել նիստը և տեղեկացնել վերոհիշյալ կազմակերպությանը, առաջարկելով մեկ աշխատանկային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:
2. Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2021 թվականի **օգոստոսի 04-ին ժամը 12:00-ին ք. Երևան, Հերացի 12 հասցեում:**

Ընդունվել է որոշում՝

Կողմ՝ 2

Դեմ՝ 0

Ստորագրություններ.

Գնահատող հանձնաժողովի Նախագահ՝ ________________ Ա. Խառատյան

Անդամներ՝ ________________ Կ. Փալայան

Քարտուղար՝ ________________ Ա. Վիրաբյան